ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 26 >> հունիսի 2013թ. N 40 - Ա

ք. Արմավիր

ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի հունիսի 25-ի N 1.1/13.1/8930-13 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների համար կազմակերպվող <CLIENT-TRESUARY> - <LSFinance> (ԳԳՕ) համակարգերում պայմանագրերի մուտքագրման հետ կապված հարցերի քննարկմանը մասնակցելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին 2013 թվականի հունիսի 26-ին գործուղել քաղաք Երևան:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (Վ.Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարում:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ